ՀՀ ԼՈՌՈՒ ԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆ ՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022թ օգոստոսի 18-ին,ժամը 11^{30} ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում՝ Վ.Սարգսյան փողոց, թիվ 94 հասցեում, կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:

Աճուրդի է դրվում հետևյալ լոտը՝

Լոտ 1. Տաշիր համայնք, գ.Կաթնառատ, 1-ին փողոց, 2/2 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 41,7 քմ (ծածկագիր՝ 06-053-0013-0019) հասարակական կառուցապատում իրականացնելու նպատակով, 18000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Լոտ 2. Տաշիր համայնք, ք.Տաշիր , Դպրոցականների փողոց, թիվ 57 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 798,7 քմ (ծածկագիր՝ 06-008-0240-0009) բնակելի տուն կառուցելու նպատակով, 632600 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, այն հարում է հաղորդակցության ուղիներին:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա) հայտ,

բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի օգոստոսի 15-ը: Վաճառվելիք լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի): Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Նախավճարի չափը մեկնարկային գնի 50 % չափով, աճուրդի մասնակցության վճարը 2000 դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-29-31, 2-34-06 հեռախոսահամարներով: